

Սույն վերլուծության մշակմանն աջակցել է Բրիտանական

Արևելք-Արևմուտք կենտրոնը (ԲԱԱԿ) ([www.bewc.org](http://www.bewc.org))

*ԲԱԱԿ-ը Միացյալ Թագավորությունում գործող հասարակական կազմակերպություն է, որը աջակցում է ԱՊՀ երկրներին իրավական բարեփոխումների հարցում*

## **ԱԼԼԵՆԵ ԴԵ ՌԻՔԵՄՈՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի  
ՎՃՈՒ**

2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ  
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<http://www.legalguide.am>

Սույն վերլուծությունում տեղ գտած եզրահանգումներն ու կարծիքները արվել են «Իրավական ուղեցույց» Հասարակական կազմակերպության անդամ, փաստաբան Նարինե Գասպարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար: Սույն վերլուծությունը չի կարելի դիտարկել որպես տվյալ գործի հետ կապված իրավական խորհրդատվություն: Այս վերլուծությունը և նրանում արտահայտված կարծիքները հետապնդում են բացառապես կրթական և տեղեկատվական նպատակներ:

Սույն վերլուծությունում արտահայտված կարծիքները հանդիսանում են հեղինակին և պարտադիր չէ որ համընկնեն «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոնի տեսակետների հետ:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
ՄԱՍ 1. ԱԼԼԵՆԵ ԴԵ ՌԻԲԵՄՈՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԸ .....	5
Ա. Գործի փաստերի համառոտ շարադրանքը.....	5
Բ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիման վրա բերված դիմումատուի գանգատը .....	11
Գ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը .....	13
ՄԱՍ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՈՒ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....	22
ՄԱՍ 3. ԳՈՐԾԻ ԷԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	34

## Ներածություն

Սույն վերլուծությունը կատարվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ «Եվրոպական դատարան») կողմից 1995 թվականի հունվարի 23-ին Ալլենե Դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով կայացրած վճռի հիման վրա: Գործը վերաբերում է մարդասպանության գործով քննության կատարման ժամանակ մամուլի ասուլիսի ժամանակ Դիմումատուի հասցեին Կառավարության անդամի և պետական բարձր պաշտոնյաների կողմից արված հայտարարություններին, և Դիմումատուի կողմից այնուհետ նախաձեռնած վարույթների երկարատևությանը՝ որն ուղղված էր իր հեղինակությանը ենթադրյալ վիրավորանք հասցնելու համար հատուցում ստանալուն: Դիմումատուն, Եվրոպական դատարանին ուղղված իր գանգատում նշել էր, որ մամուլի ասուլիսի ժամանակ արված հայտարարությունները խախտել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ «Եվրոպական կոնվենցիա» կամ «ՄԻԵԿ») 6-րդ հոդվածի 2-դ կետով երաշխավորված իր անմեղության կանխավարկածի իրավունքը: Դիմումատուն նաև բողոքում էր հատուցում ստանալու նպատակով հարուցած վարույթի երկարատևության վերաբերյալ՝ հիմնվելով ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա:

Սույն վերլուծությունը նպատակ ունի ուսումնասիրել գործի փաստերը, ներառյալ Դիմումատուի գանգատի և Ֆրանսիայի կառավարության հակափաստարկների բազմակողմանի վերլուծությունը: Վերլուծությունը նաև կանդրադառնա Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ «Եվրոպական հանձնաժողով» կամ «Հանձնաժողով») և Եվրոպական դատարանի մոտեցումներին՝ վիճարկվող իրավունքների և ազատությունների մեկնաբանման հարցում: Գործի ուսումնասիրությունը, մասնավորապես վճռի վերլուծությունը կկատարվի թեստի կիրառման միջոցով, որով Դատարանն առաջնորդվում է ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտումները քննելիս: Վերլուծությունը նաև կանդրադառնա գործի էական հանգամանքներին, որոնք նշանակալից դեր են ունեցել և դարձել են կարևոր ուղեցույց Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների մեկնաբանման հարցում:

Այս վերլուծությունը ունի ուսուցողական բնույթ և նպատակ ունի իրավաբանի մասնագիտություն ունեցողներին, այդ թվում դատավորներին, փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ մատուցողներին, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում ներգրավված անձանց և իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին, հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն չափանիշներին և ստանդարտներին որոնցով առաջնորդվում է Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները մեկնաբանելիս:

## ՄԱՍ 1. ԱԼԼԵՆԵ ՂԵ ՌԻՔԵՄՈՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԸ

### Ա. Գործի փաստերի համառոտ շարադրանքը

Դիմումատուն, պարոն Ալլենե Ղե Ռիքեմոնը գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ ընկերության քարտուղար էր հանդիսանում: Նա ապրում էր Լամոնտժուայում: 1976 թվականի դեկտեմբերի 24-ին Պառլամենտի անդամ (Օուդի մարզ departement of Eure) և նախկին նախարար պարոն Ժան Ղե Բրոգլին սպանվել էր դիմումատուի տան առջև: Նա այցելության էր եկել իր ֆինանսական հարցերով խորհրդատուին, որն ապրում էր նույն շենքում, և ում հետ պարոն Ալլենե Ղե Ռիքեմոնը պատրաստվում էր Փարիզի ռեստորաններից մեկի՝ «Սագաթաթիկների թագուհու ճաշարանի» (La Rôtisserie de la Reine Pédauque) համասեփականատերը դառնալ: Այս նախագիծը ֆինանսավորվել էր սպանվածի կողմից վերցրած վարկի միջոցներով, որը փոխանցել էր պարտք վերցրած գումարը դիմումատուին, և վերջինս էլ պատասխանատու էր վարկը մարելու համար:

Դիտավորյալ սպանության առիթով դատական քննություն սկսվեց: 1976 թվականի դեկտեմբերի 27-ին և 28-ին Փարիզի ոստիկանության քրեական բաժնի աշխատակիցները ձերբակալեցին մի շարք անձանց, ներառյալ սպանվածի ֆինանսական հարցերով խորհրդատուին: Դեկտեմբերի 29-ին ձերբակալվեց նաև Դիմումատուն: 1976 թվականի դեկտեմբերի 29-ին ֆրանսիական ոստիկանության հաջորդ տարվա բյուջեին նվիրված մամուլի ասուլիսում Ներքին գործերի նախարար պարոն Միշել Պոնյատովսկին, Փարիզի Քրեական հետաքննության վարչության պետ պարոն Ժան Դյուկրեն և քրեական բաժնի պետ սուպերինտենդանտ Պիեռ Օտտավիոլին անդրադարձան ընթացքի մեջ գտնվող հետաքննությանը: Ֆրանսիական երկու հեռուստատեսային ալիքներ իրենց լուրերի թողարկումներում լուսաբանեցին այս մամուլի ասուլիսը: Հրապարակումներն ունեին հետևյալ բովանդակությունը.

### «TF1 ԼՈՒՐԵՐ

Հաղորդավար պարոն Ռոջեր Ժիգուել. ...ահա թե ինչպես են հասարակությանը ներկայացվել Ղե Բրոգլիի գործի հանգամանքները երեկ երեկոյան պարոն Միշել Պոնյատովսկիի տված մամուլի ասուլիսում:

Պարոն Պոնյատովսկի. ... Պարոն Ղե Վարգա-Հիրչի ձերբակալումից հետո սպանության հետ առնչվող բոլոր անձինք ձերբակալված են: Սա շատ պարզ պատմություն է: Պարոն Ղե Բրոգլիի կողմից երաշխավորված բանկային ավանդը պետք է մարվեր պարոններ Վարգա-Հիրչի և Ղե Ռիքեմոնի կողմից:

Լրագրող. Պարոն սուպերինտենդանտ, ո՞վ է այս գործով գլխավոր անձը, Ղե Վարգան:

Պարոն Օտտավիոլի. Ես կարծում եմ, որ դա պետք է պարոն Ղե Վարգան լինի:

Պարոն Դյուկրեն. ... Պարոն Ղե Վարգան և նրա հանցակից պարոն Ղե Ռիքեմոնը սպանության դրդիչներն էին: Կազմակերպիչը հետաքննիչ սերժանտ Սիմոնեն էր, իսկ մարդասպանը՝ պարոն Ֆրեչեն:

Պարոն ժիգուել. Ինչպես տեսնում եք այդ արտահայտությունները մի շարք հրապարակումներ են պարունակում: Այդ պատճառով է, որ ոստիկանությունն այժմ քննադատվում է Արդարադատության նախարարության ծառայողների կողմից: Չնայած որ սուպերինտենդանտ Օտտավիոլին և պարոն Դյուկրեն գոյւյ՜ էին (ձայնագրության ավարտ):

## ԱՆՏԵՆՆԵ-2 ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաղորդավար պարոն Դանիել Բիլալիան. ... այս երեկո գործն արդեն բացահայտվել է: Սպանության դրդապատճառներն ու կատարողները հայտնի են:

Պարոն Դյուկրեն. Կազմակերպիչը հետաքննիչ սերժանտ Սիմոնեն էր, իսկ մարդասպանը՝ պարոն Ֆրեչեն:

Պարոն Օտտավիոլի. Դա ճիշտ է...: Ես կարող եմ ... ձեզ ներկայացնել փաստերը որից պարզ կդառնա, որ գործը ծագել է տուժող պարոն դե Բրոգլիի և պարոն Ալենե դե Ռիբեմոնի և պարոն Վարգայի միջև ֆինանսական գործարքից:

Պարոն Պոնյատովսկի. Սա շատ պարզ պատմություն է. պարոն դե Բրոգլիի կողմից երաշխավորված բանկային վարկը պետք է մարվեր պարոններ Վարգա Հիրչի և Դե Ռիբեմոնի կողմից:

Լրագրող. Պարոն սուպերինտենդանտ, ո՞վ է այս գործով գլխավոր անձը, դե Վա՞րգան:

Պարոն Օտտավիոլի. Ես կարծում եմ դա պետք է, որ պարոն դե Վարգան լինի:

Լրագրող պարոն Ժան-Ֆրանսիս Լուչիանի. Վարկը երաշխավորված էր չորս հարյուր միլիոն հին ֆրանկ կազմող ժան դե Բրոգլիի կյանքի ապահովագրական պոլիսով: Նրա մահվան դեպքում ապահովագրական վճարը պետք է տրվեր Պիեռ դե Վարգային և Ալլենե դե Ռիբեմոնին: Հանգուցալուծումը տեղի ունեցավ անցած գիշեր, երբ ոստիկանության ծառայող Գայ Սիմոնեն առաջինը խոստովանեց: Նա ընդունեց, որ կազմակերպել է սպանությունը և ատրճանակ է տվել պառլամենտի անդամին սպանելու համար: Նա նաև վարձել էր մարդասպանին՝ Ժերար Ֆրեչեին, որին խոստացել էր երեք միլիոն հին ֆրանսիական ֆրանկ, և որն էլ հետագայում երկու համագործակիցներ էր գտել: Նրանց ձախողման առաջին պատճառն այն էր, որ Սիմոնեի անունը նշված էր ժան դե Բրոգլիի օրագրում, իսկ երկրորդ պատճառն այն էր, որ նրանք սպանությունը կատարեցին Դարդանելի փողոց 2-ի (no. 2 rue des Dardanelles) դիմաց...»: Դա պլանավորված չէր...:

1977 թվականի հունվարի 14-ին պարոն Ալլենե դե Ռիբեմոնին մեղադրանք առաջադրվեց դիտավորյալ սպանության դրդման ու օժանդակության մեջ և նա կալանավորվեց: Նա ազատ արձակվեց 1977 թվականի մարտի 1-ին իսկ գործը կարճելու մասին որոշումը կայացվեց 1980 թվականի մարտի 21-ին:

### Վնասի հատուցման պահանջները

1977 թվականի մարտի 23-ին պարոն Ալլենե դե Ռիբեմոնը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների հիման վրա inter alia բողոք ներկայացրեց Վարչապետին: Նա պահանջում էր տասը միլիոն ֆրանսիական ֆրանկի (ՖՖ) չափով հատուցում բարոյական և նյութական վնասի համար, որն ինքը կրել էր

Ներքին գործերի նախարարի և ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների վերը հիշատակված արտահայտությունների արդյունքում:

Ալլենե դե Ռիբենոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով դեպքերի և վարույթների ժամանակագրությունը նկարագրված են ներքո Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1**

<b>ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ</b>	
1977 թվականի մարտի 23	1977 թվականի մարտի 23-ին պարոն Ալլենե դե Ռիբենոնը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների հիման վրա բողոք ներկայացրեց Վարչապետին: Նա պահանջում էր տասը միլիոն ֆրանսիական ֆրանկի (ՖՖ) չափով հատուցում բարոյական և նյութական վնասի համար, որն ինքը կրել էր Ներքին գործերի նախարարի և ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների վերը հիշատակված արտահայտությունների արդյունքում:
1977 թվականի սեպտեմբերի 20	1977 թվականի սեպտեմբերի 20-ին դիմումատու Վարչապետի կողմից իր բողոքի անհիմն մերժումը վերանայելու հայցով դիմեց Փարիզի վարչական դատարան, միաժամանակ կրկին ներկայացնելով հատուցման իր պահանջը: Նա իր փաստարկները ներկայացրեց 1977 թվականի հոկտեմբերի 12-ին:
1978 թվականի փետրվարի 21	1978 թվականի փետրվարի 21-ին Արդարադատության նախարարը վարվեց նույն կերպ: Վարչական դատարանի կողմից 1978 թվականի մարտի 14-ին ծանուցում ստանալուց հետո Ներքին գործերի նախարարն ու Վարչապետը համապատասխանաբար 1978 թվականի ապրիլի 21-ին և 27-ին ներկայացրեցին իրենց գրավոր փաստարկները: Պարոն Ալլենե դե Ռիբենոնը լրացուցիչ փաստարկներ ներկայացրեց 1978 թվականի մարտի 29-ին և մայիսի 24-ին:
1979 թվականի մարտի 29	Հետագայում, 1979 թվականի մարտի 29-ին, կրկին փաստարկներ ներկայացվեցին՝ Մշակույթի նախարարի, ում, գործի նյութերն ուղարկվել էին 1979 թվականի հունվարի 23-ին, 1979 թվականի հունիսի 6-ին և 1980 թվականի օգոստոսի 12-ին՝ Ներքին գործերի նախարարի և 1980 թվականի մայիսի 14-ին՝ դիմումատուի կողմից:
1980 թվականի սեպտեմբերի 29	1980 թվականի սեպտեմբերի 29-ի լսումներից հետո 1980 թվականի հոկտեմբերի 13-ին Փարիզի վարչական դատարանը վճիռ կայացրեց, որում բերվում էին հետևյալ հիմնավորումները. «Պարոն Ալլենե, ինքը՝ Ալլենե դե Ռիբենոնը, հայց էր ներկայացրել առ այն, որ Պետությունը պետք է հատուցի վնասները, որոնք ինքը ենթադրաբար կրել էր 1976 թվականի դեկտեմբերի 29-ին տեղի ունեցած պարոն ժան դե Բրոգլիի սպանության կապակցությամբ կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Ներքին գործերի նախարարի հայտարարություններում իր անվան հիշատակման հետևանքով: Զնայած, որ Պետությունը կարող է պատասխանատվություն կրել, այնուամենայնիվ Կառավարության անդամի վարչական գործողությունների համար, արտահայտությունները, որոնք նա

	անում է իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված, չեն կարող վարչական դատարանների քննության առարկա դառնալ: Դրանից հետևում է, որ հայցն անընդունելի է:...»
1980 թվականի դեկտեմբերի 15	1980 թվականի դեկտեմբերի 15-ին Պետական խորհուրդը գրանցեց պարոն Ալլենե դե Ռիբեմոնի բողոքի համառոտ շարադրանքը: 1981 թվականի մայիսի 19-ին զգուշացում ստանալուց հետո, 1981 թվականի հունիսի 1-ին նա ամբողջությամբ ներկայացրեց իր փաստարկները: Հուլիսի 7-ին այդ փաստարկներն ուղարկվեցին Ներքին գործերի նախարարին, որն այդ կապակցությամբ իր առարկությունները ներկայացրեց 1982 թվականի ապրիլի 13-ին: Դիմումատուն պատասխանեց 1982 թվականի հուլիսի 7-ին:
1983 թվականի մայիսի 11	1983 թվականի մայիսի 11-ին կայացած լսումներից հետո 1983 թվականի մայիսի 27-ին Պետական խորհուրդը մերժեց բողոքը հետևյալ հիմնավորումներով. «...Ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում Ներքին գործերի նախարարի արած հայտարարությունները չեն կարող առանձնացվել այդ միջոցառումներից: Հետևաբար վարչական դատարանները չեն, որ պետք է որոշում կայացնեն նման հայտարարությունների մինչդատական ազդեցության վերաբերյալ: Վերոգրյալից բխում է, որ չնայած Փարիզի Վարչական դատարանը սխալ էր գործել, երբ վիճարկվող վճռում սահմանել էր, որ դիմումատուի պահանջը վերաբերում է «ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված» գործողությանը և հետևաբար չի կարող քննության առարկան դառնալ վարչական դատարաններում, պարոն Ալլենեի բողոքը կապված այդ վճռում իր պահանջը մերժելու հետ, անհիմն է»:
<b>ՎԱՐՈՒՅԹՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ</b>	
1984 թվականի փետրվարի 29	Պարոն Ալլենե Դե Ռիբեմոնը 1984 թվականի փետրվարի 29-ին և մարտի 5-ին Փարիզի բարձր ատյանի դատարան հայց ներկայացրեց համապատասխանաբար ընդդեմ Վարչապետի և Կառավարության Իրավաբանի:
1984 թվականի սեպտեմբերի 25	1984 թվականի սեպտեմբերի 25-ին Վարչապետը հայտնեց, որ Բարձր ատյանի դատարանը իրավագործություն չունի, և նրա կարծիքով, նման գործողությունը կարող էր վիճարկվել միայն վարչական դատարաններում: Վարչապետին վերագրվող հայտարարությունների ամբողջական տեքստը ներկայացնելու վերաբերյալ դիմումատուին խնդրանք ներկայացնելուց և զրպարտության հետ կապված գործողությունների ժամկետի սահմանափակումների մասին անհանգստություն արտահայտելուց հետո, Կառավարության Իրավաբանը պատասխանեց 1984 թվականի սեպտեմբերի 21-ին և 1985 թվականի մայիսի 28-ին:
1984 թվականի նոյեմբերի 14 և	Դիմումատուն իր պնդումները ներկայացրեց 1984 թվականի նոյեմբերի 14-ին և 1985 թվականի ապրիլի 5-ին: Նա խնդրեց

1985 թվականի ապրիլի 5	դատարանին պահանջել երկու ֆրանսիական հեռուստաընկերություններից տրամադրել 1976 թվականի դեկտեմբերի 29-ի մամուլի ասուլիսի տեսաձայնագրությունները և ներկայացնել դրա վերաբերյալ հրապարակված թերթից քաղվածքները:
1986 թվականի հունվարի 8	<p>Դատարանը 1986 թվականի հունվարի 8-ին կայացրեց հետևյալ բովանդակությամբ վճիռ.</p> <p>«... Դրանից հետևում է, որ Պարոն Պատրիկ Ալլենե դե Ռիբեմոնի՝ Ներքին գործերի նախարարի հայտարարությունների արդյունքում իրեն պատճառված վնասի համար պետությունից հատուցում պահանջելու մասին հայցը պետք է հարուցվեր միայն Կառավարության իրավաբանի դեմ, ով դատարանում Պետության միակ ներկայացուցիչն է, այլ ոչ թե Վարչապետի դեմ, ով, հետևաբար այլևս գործով որպես կողմ հաղես գալ չէր կարող» :</p> <p><u>Ընդդատությունը</u></p> <p>Փարիզի բարձր ատյանի դատարանը պետք է իրավագործություն ունենա այնքանով, որքանով որ Ներքին գործերի նախարարին վերագրվող հայտարարությունները կարող են կապվել ոստիկանության գործունեության հետ և չեն առանձնացվում դրանցից: ... Դատարանը չէ, որ պետք է ուղղի կողմերի թերությունները, կամ լրացնի նրանց կողմից ներկայացված ապացույցները... : Պատրիկ Ալլենե Դե Ռիբեմոնը ներկայացրել էր քաղվածքներ 1976 թվականի դեկտեմբերի 29-ի մամուլի ասուլիսը լուսաբանող զանգվածային լրատվության միջոցներից, որոնցից մի քանիսը ասուլիսի հաջորդ օրվա կամ ավելի ուշ ամսաթվի հրապարակումներ էին: ...Սակայն թերթերը չէին նշել Ներքին գործերի նախարարի կողմից ենթադրաբար արված արտահայտությունները, ինչպես նշված էր հայցադիմումում:</p> <p>Այնուամենայնիվ, դեպքը տեղի ունենալուց մի քանի տարի անց լրագրողներն իրենց հրապարակումներում և «Լը Փուանում» (Le Point) 1979 թվականի օգոստոսի 6-ին անդրադարձան Պատրիկ Ալլենե դե Ռիբեմոնի ենթադրյալ դերի վերաբերյալ Ներքին գործերի նախարարի հայտարարություններին...: .... Սակայն, հարկ է նշել, .... որ Պատրիկ Ալլենե Դե Ռիբեմոնի կողմից հիշատակվող մամուլից քաղվածքները չեն կարող դիտարկվել որպես միակ փաստ պատասխանողի կողմից այս կապակցությամբ բարձրացված առարկումների լույսի ներքո :</p> <p>Ավելին,... մամուլի ասուլիսի ժամանակ կատարված վիճարկվող հրապարակումները ներկայացնում էին զուտ արտահայտություններ Պատրիկ Ալլենե Դե Ռիբեմոնի՝ ժան Դե Բրոգլիի սպանությանը ներգրավվածության մասին, որոնք ենթադրաբար արվել էին սուպերինտենդանտ Օտավիոլիի կողմից՝ Ներքին գործերի նախարարի խոսելուց հետո:</p> <p>Հետևաբար, քանի որ հայցվորը պետության դեմ հայց էր հարուցել բացառապես Ներքին գործերի նախարարի կողմից արված արտահայտությունների առիթով, ապա հայցը պետք է մերժել, առանց գրպարտության և քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածով սահմանված դատական քննության գաղտնիության</p>

	խախտման ժամկետային սահմանափակման հարցերի քննարկման, չնայած նրան, որ հայցվորը անդում էր, թե այս հայցը զրպարտության վերաբերյալ էր հարուցվել...»:
<b>ՎԱՐՈՒՅԹԸ ՓԱՐԻԶԻ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ</b>	
1986 թվականի փետրվարի 19	1986 թվականի փետրվարի 19-ին պարոն Ալլենե դե Ռիբեմոնը բողոքարկեց Փարիզի վերաքննիչ դատարան:
1986 թվականի մարտի 19	1986 թվականի Մարտի 19-ին Կառավարության իրավաբանը հակընդդեմ բողոք ներկայացրեց: Դիմումատուն կրկին պահանջեց, որ տեսաձայնագրությունները պետք է տրամադրվեն ցուցադրման համար:
1986 թվականի մայիսի 7	1986 թվականի մայիսի 7-ին դատաքննության համար գործը նախապատրաստող դատավորը իր անդումները ներկայացնելու մասին ծանուցում ուղարկեց պարոն Ալլենե դե Ռիբեմոնին, բայց առանց արդյունքի: 1986 թվականի հոկտեմբերի 14-ին դատավորը խնդրեց նրան ներկայացնել իր փաստաթղթերը մինչև հոկտեմբերի 30-ը, իսկ անդումները՝ մինչև նոյեմբերի 14-ը: Նոյեմբերի 19-ին նա վերջին ծանուցումն ուղարկեց՝ նախքան գործը դատական քննությանը նախապատրաստումն ավարտելը: Կառավարության իրավաբանն իր անդումները ներկայացրեց նոյեմբերի 28-ին, իսկ դիմումատուն՝ դեկտեմբերի 9-ին: Դեկտեմբերի 21-ին կողմերը տեղեկացվեցին, որ գործը դատական քննության համար պատրաստ լինելու մասին որոշումը կկայացվի 1987 թվականի ապրիլի 28-ին:
1987 թվականի հունիսի 17	1987 թվականի հունիսի 17-ի դատական նիստի ժամանակ պարոն Ալլենե դե Ռիբեմոնը խնդրեց հետաձգել նիստը և, դատարանի կողմից սահմանված կարգով համաձայնություն ստանալուց հետո, իր հետագա փաստարկները ներկայացրեց հուլիսի 8-ին:
1987 թվականի հոկտեմբերի 21	Վերաքննիչ դատարանը մեկ այլ նիստ գումարեց 1987 թվականի սեպտեմբերի 16-ին, իսկ վճիռը կայացրեց 1987 թվականի հոկտեմբերի 21-ին: Այն չէր բավարարում դիմումատուի բողոքը հետևյալ պատճառաբանությամբ. «Ըստ դիմումատուի, պարոն Պոնյատովսկին արել էր հետևյալ հայտարարությունը. «Պարոն դե Վարզան և Պարոն Ալլենե դե Ռիբեմոնը սպանության դրդիչներն էին: Կազմակերպիչը հետաքննիչ սերժանտ Սիմոնեն էր, իսկ մարդասպանը պարոն Ֆրեչեն»»: Պարոն Պոնյատովսկու կամ պարոն Դյուկրեի և պարոն Օտտավիոլիի կողմից արված մի շարք արտահայտություններից կարելի էր պարզորոշ ենթադրել, որ բոլոր մեղավորները ձերբակալվել էին, քաշքշուկն ավարտված էր, իսկ գործը բացահայտված: Ենթադրվում էր, որ այդ երեք անձիք էլ նշել էին, որ հանցագործության պատճառը պարոն դե Բրոզիի ստացած բանկային վարկն էր, որը հնարավորություն էր տվել պարոն դե Ռիբեմոնին ձեռք բերել «Սագաթաթիկների թագուհու ճաշարան» (Rôtisserie de la Reine Pédauque) ընկերության բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին: Ինչևէ, ինչպես դատարանը ստորև իրավացիորեն վճռել է, պարոն Ալլենե դե Ռիբեմոնի կողմից ներկայացված մամուլից քաղվածքները բավարար չեն նրա անդումները ապացուցելու համար:

	<p>... Չի ապացուցվել, որ դատական քննության ընթացքում կատարված վիճարկվող արտահայտություններն, ինքնին, պատճառել են ենթադրյալ վնասը: ... Վիճելի արտահայտությունների և վիճարկվող վնասի միջև որևէ պատճառահետևանքային կապի բացակայության պայմաններում, անհրաժեշտություն չկա քննության առնել ձայնագրությունները պահանջելու վերաբերյալ արված լրացուցիչ դիմումը:...»</p>
<b>ՎԱՐՈՒՅԹԸ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ</b>	
<p>1988 թվականի նոյեմբերի 4</p>	<p>Պարոն Ալլենե դե Ռիբեմոնը վճռաբեկ բողոք բերեց, որը Վճռաբեկ դատարանը (Երկրորդ քաղաքացիական բաժանմունք) քննեց 1988 թվականի նոյեմբերի 4-ին և առանց բավարարման թողեց 1988 թվականի նոյեմբերի 30-ին, հետևյալ հիմքերով.</p> <p>«...Առաջին հերթին վիճարկվում է, որ Վերաքննիչ դատարանը աղավաղել էր մամուլից քաղվածքների իմաստը, որոնք ուղղակիորեն ապացուցում էին, որ արտահայտություններն արել է Ներքին գործերի նախարարը և նշում էին դրանում օգտագործված կոնկրետ բառերը: Երկրորդ, որ դա խախտել է Քաղաքացիական օրենսգրքի 1382-րդ հոդվածը, առ այն, որ մերժվել է պարոն Պատրիկ Տանկրեդե Ալլենե դե Ռիբեմոնի կրած բարոյական վնասի հարցի քննարկումը, և վերջապես խախտվել է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը առ այն, որ մերժել է արդարացի փոխհատուցում տրամադրել մի մարդու, ում հեղինակությունը վնասվել էր միլիոնավոր հեռուստադիտողների կողմից լսված արտահայտություններում:</p> <p>Ինչևէ, Վերաքննիչ դատարանն իր վճռում սահմանեց,...որ մամուլից քաղվածքները չէին լուսաբանում Ներքին գործերի նախարարի կողմից ենթադրաբար արված արտահայտությունները, ... այլ ուղղակի անդրադառնում էին այն նշումներին, որոնք արվել էին ոստիկանության սուպերինտենդանտի կողմից՝ Նախարարի խոսելուց հետո, և որ պարոն Պատրիկ Տանկրեդե Ալլենե դե Ռիբեմոնի, որպես դրդիչի դերին վերաբերող նշումները, որոնք վերագրվում էին պարոն Պոնյատովսկուն, մամուլում հրապարակվել էին միայն դեպքից մի քանի տարի անց: ...Դիտարկելով այս պատճառն առանձին, մի կողմ թողնելով բողոքի իրավական հիմնավորումները, որոնք երկրորդական նշանակություն ունեին, Վերաքննիչ դատարանը իր վճիռը հիմնավորեց օրենքով:...»</p>

**Բ. Եվրոպական կոնվենցիայի հիման վրա բերված դիմումատուի գանգատը**

Պարոն Ալլենե դե Ռիբեմոնը իր գանգատը Եվրոպական Հանձնաժողովին ներկայացրեց 1989 թվականի մայիսի 24-ին: Դիմումատուն իր գանգատը ներկայացրել էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 13-րդ հոդվածի հիման վրա:

1993 թվականի փետրվարի 28-ին Հանձնաժողովը գանգատը (թիվ 15175/89) անմեղության կանխավարկածի անտեսման վերաբերյալ բողոքի և վարույթի

երկարատևության մասով հայտարարեց ընդունելի, իսկ մնացած մասով անընդունելի:

1993 թվականի հոկտեմբերի 12-ի իր որոշմամբ (31-րդ հոդված) Հանձնաժողովը միաձայն որոշեց, որ առկա է 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի խախտում:

**Աղյուսակ 2-ը** ներկայացնում է Եվրոպական դատարանում 1994 թվականի հոկտեմբերի 27-ին և 1995 թվականի հունվարի 23-ին կայացած լսումներում Եվրոպական կոնվենցիայի հիման վրա Դիմումատուի ներկայացրած գանգատը և Ֆրանսիայի կառավարության հակափաստարկները Դիմումատուի կողմից ներկայացված ենթադրյալ խախտումների կապակցությամբ:

## Աղյուսակ 2.

<b>Հոդվածները, պահանջները խախտվել են որոնց ենթադրաբար</b>	<b>Դիմումատուի գանգատը</b>	<b>Ֆրանսիայի կառավարության հակափաստարկները</b>
Դիմումատուն հայցում էր Դատարանից «հաստատել 1993 թվականի հոկտեմբերի 12-ի Հանձնաժողովի որոշումը» և «վճռել, որ առկա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի խախտում»: 6-րդ հոդվածի 2-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը. «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:	Դիմումատուն պնդում էր, որ 1976 թվականի դեկտեմբերի 29-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Ներքին գործերի նախարարի և ոստիկանության բարձրաստիճան ծառայողների կատարած արտահայտությունները խախտում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված անմեղության կանխավարկածից օգտվելու իրավունքը:	Ֆրանսիայի կառավարությունը դատարանից խնդրում էր «վճռել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում տեղի չի ունեցել»:
6-րդ հոդվածի 1-ին կետն ունի հետևյալ բովանդակությունը. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա	Դիմումատուն պնդում էր, որ ներպետական դատարաններն անկախ չէին և վարույթն այդ դատարաններում չափից ավելի երկար է տևել, ինչն էլ առաջացրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների խախտում:	Ֆրանսիայի կառավարությունը դատարանից խնդրում էր «վճռել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել»:

<p>ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:</p>		
---	--	--

**Գ. Եվրոպական դատարանի վճիռը**

Ստորև բերված Այյուսակ 3-ում ներկայացված են Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական դատարանի առջև Դիմումատուի ներկայացրած բողոքները և Ֆրանսիայի կառավարության կողմից բանավոր հնչեցված և գրավոր հուշագրում ներկայացված առարկությունները: Այյուսակը նաև պարունակում է Դիմումատուի կողմից վիճարկվող Եվրոպական կոնվենցիայի հոդվածների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը և Եվրոպական դատարանի վճիռը՝ մատնանշելով ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով երաշխավորված իր իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ դիմումատուի գանգատի կապակցությամբ Եվրոպական դատարանի հիմնավորումները:

**Աղյուսակ 3**

<b>ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ</b>			
<b>ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ</b>			
<b>Դիմումատուի գանգատը</b>	<b>Ֆրանսիայի կառավարության առարկությունները</b>	<b>Եվրոպական Հանձնաժողովի դիրքորոշումը</b>	<b>Եվրոպական դատարանի վճիռը</b>
<p>Դիմումատուն բողոքում էր 1976 թվականի դեկտեմբերի 29-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Ներքին գործերի նախարարի և ոստիկանության բարձրաստիճան ծառայողների կատարած արտահայտությունների կապակցությամբ: Դիմումատուն հիմնվում էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի վրա:</p>	<p>Կառավարությունը, հիմնվելով 1983 թվականի մարտի 25-ին Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանի վճիռի վրա, ըստ էության վիճարկում էր 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիությունը (շարք A թիվ 62): Կառավարությունը պնդում էր, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել միայն դատական իշխանության կողմից և դա կարող էր արտահայտվել միայն այն դեպքում, երբ վարույթի արդյունքում մեղադրական դատավճիռ է կայացվում, սակայն դատարանի հիմնավորումներից բխում է, որ մեղադրյալն ի սկզբանե դիտվել էր մեղավոր:</p>	<p>Հանձնաժողովն ընդունեց, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը վեր է կանգնած քրեական վարույթում առկա բոլոր դատավարական երաշխիքներից, և գտավ, որ դրա շրջանակները շատ լայն են ու դրանով իսկ պարտավորություններ են առաջացնում ոչ միայն քրեական գործեր քննող դատարանների այլ նաև այլ իշխանությունների համար:</p>	<p>Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակները չեն սահմանափակվում Կառավարության կողմից նշված հնարավոր դեպքերով: Դատարանը Մինելլի և Սեկանինայի վերը նշված գործերով վճռեց, որ առկա է եղել այս դրույթների պահանջների խախտում: ... Ավելին, Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիան պետք է մեկնաբանվի այնպես, որ երաշխավորվեն ոչ թե տեսական ու վերացական այլ գործող ու արդյունավետ հրավումներ... Սա կիրառելի է նաև 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված հրավումների նկատմամբ:</p>

			Դատարանը գտնում է, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի այլ նաև այլ հանրային իշխանությունների կողմից:
<b>6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանումը</b>			
Դիմումատուն պնդում էր, որ Ներքին գործերի նախարարի արտահայտությունները և նրա ենթակայության տակ գտնվող ու գործը քննող ոստիկանության ծառայողի և Քրեական հետաքննության վարչության պետի՝ Ներքին գործերի նախարարի ներկայությամբ արված հայտարարությունները անհամատեղելի էին անմեղության կանխավարկածի հետ:	Կառավարությունը պնդում էր, որ այդպիսի հայտարարությունները ընդգրկվում են ընթացող քրեական վարույթի վերաբերյալ տեղեկատվության շրջանակներում և որպես այդպիսին անմեղության կանխավարկածը չեն խախտում, քանի որ չեն պարտավորեցնում դատարաններին և կարող են հերքվել հետագա քննության ընթացքում: Սա են հաստատում գործի փաստերը, քանի որ դիմումատուին պաշտոնապես մեղադրանք ներկայացվեց միայն մամուլի ասուլիսից երկու շաբաթ անց և գործը վարող դատավորը վերջիվերջո որոշեց գործը կարճել հանցակազմի բացակայության	Հանձնաժողովը գտնում է, որ Ներքին գործերի նախարարի արտահայտությունները և նրա ենթակայության տակ գտնվող ու գործը քննող ոստիկանության ծառայողի և Քրեական հետաքննության վարչության պետի՝ Ներքին գործերի նախարարի ներկայությամբ արված հայտարարությունները անհամատեղելի են անմեղության կանխավարկածի հետ: Հանձնաժողովը նշում է, որ այդ արտահայտություններում ու հայտարարություններում պարունակվեցին Ռիբենոնը ներկայացված էր որպես պարոն դե Բրոգլիի սպանության դրդիչներից մեկը:	Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատությունը ներառում է տեղեկություն և ստանալու և տարածելու ազատությունը: Ուստի 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող խոչընդոտել իշխանությունների և հասարակությանը տեղեկացնելու ընթացող քրեական գործի վարույթի վերաբերյալ, բայց պահանջում է դա անել բավարարուսպ և շրջահայացորեն, հարգելով անմեղության կանխավարկածի սկզբունքը: Դատարանը նշում է, որ տվյալ դեպքում ֆրանսիական

	հիմքով:		<p>ոստիկանության որոշ բարձրաստիճան ծառայողներ պարոն Ալենե դե Ռիբեմոնին, առանց որևէ նախապայմանի կամ վերապահման, ներկայացնում էին որպես սպանության դրդիչներից մեկին՝ մեղսակից դարձնելով նրան այդ սպանությանը: Սա որոշակիորեն դիմումատուի մեղավորության հռչակում էր, որը առաջին՝ դրդում էր հանրությանը հավատալ նրա մեղավորությանը և երկրորդ՝ կանխորոշում էր իրավասու դատական իշխանության կողմից փաստերի գնահատումը: Հետևաբար առկա է 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:</p>
--	---------	--	--

**ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄԸ**  
**A. Քննարկման ենթակա ժամանակահատվածը**

<p>Դիմումատուն բողոքում էր վարչական, իսկ հետո նաև ընդհանուր իրավասության դատարաններում իր կողմից վնասի հատուցման վերաբերյալ</p>	<p>Կառավարության ներկայացմամբ վարչական դատարաններում վարույթները չպետք է հաշվի առնվեն: Այդ դատարանները ըստ էության որոշում չեն կայացրել և հրաժարվել են</p>	<p>Հանձնաժողովն ընդունեց քննարկման ենթակա ժամանակահատվածի ավարտի հետ կապված դիմումատուի փաստարկները: Հանձնաժողովը նշեց, որ վարույթը</p>	<p>Դատարանը չվիճարկեց 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը: Ինչպես և Հանձնաժողովը, Դատարանը նշեց, որ վիճարկվող վարույթները</p>
---	--	---	---

<p>հարուցված գործերի քննության երկար տևողությունից: Նա հիմնվում էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա: Մյուս կողմից, դիմումատուն պնդում էր, որ վարույթները սկսվել են Փարիզի վարչական դատարան բերված հայցադիմումով, և որ ընդդատություններ ի վերաբերյալ տարածայնությունների պատճառով ընդհանուր իրավասության դատարաններում իրականացված վարույթը վարչական դատարաններում սկսված գործընթացի անհրաժեշտ շարունակությունն էր: Բացի դրանից, գործով վարչական դատարանների ընդդատությունն այնքան բնական էր թվում, որ փոխնախարարը <i>Փարիզի բարձրատյանի դատարան</i> վիճարկեց գործի նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանների</p>	<p>ընդդատությունից՝ վարչական և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքին համապատասխան, ինչը վարչական դատարաններին պարտավորեցնում էր մերժել այն փաստարկները, որոնց քննությունը նրանք չեն կարող իրականացնել առանց ընդհանուր իրավասության դատարանների գործունեության միջամտության: Պարոն Ալլենե դե Ռիբեմոնի փաստաբանները չէին կարող անտեղյակ լինել այս սկզբունքին:</p>	<p>ավարտվել է 1988 թվականի նոյեմբերի 30-ին, երբ Վճռաբեկ դատարանը առանց բավարարման էր թողել Փարիզի վերաքննիչ դատարանի 1987 թվականի հոկտեմբերի 21-ի վճռի դեմ դիմումատուի բերած բողոքը:</p>	<p>վերաբերում էին հայտարարությունների արդյունքում դիմումատուի կողմից իր հեղինակությանը պատճառված վնասի հատուցման պահանջներին.... Ինչպես և Հանձնաժողովը, դատարանը ևս ընդունեց դիմումատուի փաստարկը [քննարկման ենթակա ժամանակահատվածի վերջի վերաբերյալ]: Դատարանը նշեց, որ վարչական ու ընդհանուր իրավասության դատարանների՝ փոխհատուցման վարույթների հետ կապված ընդդատության սահմանազատման հարցը բավականին բազմակողմանի ու բարդ խնդիր է, հատկապես, որ այդ վարույթները սկսվել են Կառավարության անդամի կողմից արված արտահայտությունների հիման վրա .... Հետևաբար, վարույթի տևողության ողջամտության</p>
--	---	--	--

<p>ընդդատության հարցը:</p>			<p>հարցը որոշելու կապակցությամբ դիտարկվող ժամկետի հաշվարկն սկսվում է 1977 թվականի մարտի 23-ից, երբ փոխնախարարին բողոք ներկայացվեց, <u>ու շարունակվում է մոտավորապես 11 տարի և 8 ամիս:</u></p>
<b>B. Վարույթների տևողության ողջամտությունը</b>			
<p>Ալլենե դե Ռիբենոնը համաձայն էր, որ իր հարուցած վարույթը որոշակի բարդություն ուներ, քանի որ կապված էր պետության պատասխանատվության հետ:</p>	<p>Կառավարության կարծիքով գործի հետ կապված ծագում է նաև արտահայտություններ ի անփութությունը և դրանց արդյունքում ենթադրյալ վնասներ պատճառելն ապացուցելու բարդ խնդիր: Բացի դրանից կային դատավարական բարդություններ, որոնց առաջացմանը նպաստել էր դիմումատուն:</p>	<p>Հանձնաժողովը, որի կարծիքին հղում է կատարում պարոն Ալլենե դե Ռիբենոնը, ընդունում էր, որ նրա հարուցած վարույթը որոշակի բարդություն ուներ, քանի որ կապված էր պետության պատասխանատվության հետ:</p>	<p>Դատարանը գտնում է, որ նույնիսկ եթե վերը նշված պատճառների ուժով գործը բարդ էր, դա չէր արդարացնում վիճարկվող դատական վարույթների տևողությունը:</p>
<p>Պարոն Ալլենե դե Ռիբենոնը պնդում էր, որ ինքը պատասխանատու չէր վարույթների դանդաղ ընթացքի համար:</p>	<p>Ի հակադրություն Կառավարությունը պնդում էր, որ [Դիմումատուն] մոտավորապես վեց տարի ձգձգել էր վարույթի ընթացքը: Դիմումատուն Վարչական դատարանի կողմից իրականացվող վարույթի ընթացքում սպասել էր 11 ամիս մինչև Մշակույթի ու Ներքին գործերի</p>	<p>Հանձնաժողովը գտնում է, որ Պարոն Ալլենե դե Ռիբենոնի վարքագիծը որոշակի առումով երկարաձգել է վարույթը:</p>	<p>Դատարանը համաձայնվում է Հանձնաժողովի հետ առ այն, որ Դիմումատուի վարքագիծը որոշակի առումով երկարաձգել է վարույթը: Դատարանն արդեն նշել է, որ նկատի ունենալով գործը քննելու իրավասություն ունեցող կոնկրետ</p>

	<p>նախարարների առարկություններին պատասխանելը, յոթ ամիս՝ Պետական խորհրդում իր բողոքը հաշվառելուց հետո նախքան իր փաստարկներն ամբողջությամբ ներկայացնելը, ինը ամիս՝ Պետական խորհրդի կողմից իր բողոքը մերժելու վերաբերյալ կայացված որոշումից հետո, նախքան ընդհանուր իրավասության դատարան հայց ներկայացնելը և տաս ամիս՝ գործը քննությանը նախապատրաստող դատավորի կողմից բազմաթիվ միջամտությունների արդյունքում ընդհատվելուց հետո, նախքան Վերաքննիչ դատարան իր փաստարկները ներկայացնելը: Նրա կողմից Վերաքննիչ դատարանից գործի քննությունը հետաձգելու մասին խնդրանքը ևս երեք ամսով երկարաձգեց վարույթը: Ավելին, Փարիզի Վարչական դատարանի կողմից գործն իրեն ընդդատյա չլինելու մասին որոշման ընդունումից հետո անմիջապես քաղաքացիական</p>		<p>դատարանը որոշելու հետ կապված բարդությունը, դիմումատուն չի կարող քննադատվել առաջին հերթին վարչական դատարաններին հայց ներկայացնելու համար: Իսկապես ... Փարիզի վարչական դատարանի (1980 թվականի հոկտեմբերի 13-ի) և Պետական խորհրդի (1983 թվականի մայիսի 27-ի) որոշումների միջև ընկած <u>երկու տարի յոթ ամիս</u> ընդմիջման պատասխանատվ ությունը չի կարող վերագրվել միայն պարոն Ալլենե դե Ռիբենոնին: Հետևաբար, եթե նույնիսկ ենթադրենք, որ դիմումատուն կարող է պատասխանատու լինել մոտավորապես <u>երեք տարի և չորս ամիս ձգձգման համար, ապա դեռ կմնա մոտավորապես ութ տարի:</u></p>
--	--	--	--

	<p>դատարան հայց չհարուցելով, ինչի իրավունքով դիմումատուն օժտված էր Ֆրանսիայի օրենքներով, նա երկարաձգեց վարույթը նոտավորապես <u>երկու</u> <u>տարի յոթ ամսով</u>, որն այդ որոշման և Պետական խորհրդի որոշման կայացման միջև ընկած ժամանակահատվածն էր:</p>		
<p>Պարոն Ալլենե դե Ռիբենոնը ազգային իշխանությունների վարքագծի առնչությամբ հղում էր կատարում Հանձնաժողովի կարծիքի վրա: Միաժամանակ Դիմումատուն պնդում էր, որ տեսաձայնագրությ ունները տրամադրելու վերաբերյալ իր միջնորդությունը ազգային իշխանությունների կողմից մերժելը, որը հնարավորություն կտար իրեն հաստատել իր փաստարկները, իր ազդեցությունն է ունեցել վիճարկվող վարույթի ձգձգման հարցում:</p>	<p>Կառավարությունը պնդում էր, որ ազգային իշխանություններն ամեն բան արել են վարույթի ընթացքն արագացնելու համար: Մասնավորապես, Փարիզի վերաքննիչ դատարանում գործը քննության համար նախապատրաստող դատավորը բազմաթիվ անգամ հիշեցումներ է ուղարկել դիմումատուին իր փաստարկները ներկայացնելու համար, որոնք նա չէր շտապում անել: Բացի դրանից, անգործության միակ ժամանակաշրջանը, որի համար Հանձնաժողովը մեղադրում էր ազգային իշխանություններին, հանդիսանում էր վարչական</p>	<p>Հանձնաժողովը նշեց, որ առկա էին անգործության որոշ ժամանակահատվածն եր, որոնց համար ազգային իշխանությունները պատասխանատու էին:</p>	<p>Դատարանը համաձայնվեց Հանձնաժողովի հետ, որ առկա էին անգործության որոշ ժամանակահատվ ածներ, որոնց համար ազգային իշխանությունները պատասխանատու էին... վարույթը Փարիզի վարչական դատարանում տևեց <u>ութ ամիս ...</u> Երկրորդ հատվածը տևեց <u>ինը ամիս և երկու</u> <u>շաբաթ</u>, Պետական խորհրդում գործի քննության ընթացքում ... Բացի դրանից ... փոխնախարարը և Կառավարության իրավաբանը իրենց առարկություններն ու պնդումները ներկայացրել էին</p>

	<p>դատարաններում գործի քննությունը, որը ինչպես նշվել էր, չպետք է հաշվի առնել սույն գործով:</p>	<p>միայն իրենց դեմ վարույթը հարուցվելուց համապատասխանաբար յոթ և վեց ամիս անց:      Ավելին,...      վարչական իշխանությունները որոշ քայլեր էին ձեռնարկել, որոնք ձգձգել են վարույթ...:  <u>Դատարանը չի կասկածում, որ սա վարույթի ընթացքի ձգձգման հիմնական պատճառն էր:</u>      ... Դատարանը նշում է, որ վարչական դատարաններից ոչ պակաս քան հինգ տարի և ութ ամիս պահանջվեց որոշելու համար, որ գործն իրենց ընդդատյա չէ, ...:  <u>Գործի բարդությունը և դիմումատուի վարքագիծն, ինքնին, բավարար չեն բացատրելու համար վարույթի տևողությունը:...</u>      ...Նույնիսկ այն, որ վարույթները Վերաքննիչ ու Վճռաբեկ դատարաններում առանձին վերցրած չափազանց երկարատև չեն եղել, վարույթի ընդհանուր</p>
--	--	---

			տևողությունը, այն է՝ մոտավորապես տասնմեկ տարի և ութ ամիս, չի կարող ողջամիտ համարվել: Հետևաբար առկա է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
--	--	--	---

ՀՈՂՎԱԾՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱԴՐԱԲԱՐ ԽԱԽՏՎԵԼ ԵՆ	ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԾԻՔԸ	ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՐԸ
ՄԻԵԿ-Ի 6-րդ հոդվածի 1-ին կետ	Խախտում (միաձայն)	Խախտում (միաձայն)
ՄԻԵԿ-Ի 6-րդ հոդվածի 2-րդ կետ	Խախտում (միաձայն)	Խախտում (միաձայն)
ՄԻԵԿ-Ի 13-րդ հոդված	Հռչակվել է ոչ կիրառելի	Չի դիտարկվել

Դատավոր Միֆսուդ Բոննիչիի մասնակի տարբերվող կարծիքը – Դատավորը 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման առկայության հարցում համաձայն չէ Դատարանի հետ: Դատավոր Բոննիչին մատնանշում էր այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանն իր վճռով առաջին անգամ սահմանեց, որ այն հիմնական իրավունքը, որի համաձայն «քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղք ապացուցվել չէ օրենքով սահմանված կարգով», «կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի այլ նաև հանրային այլ իշխանությունների կողմից»: Դատավորի կարծիքով. «... երբ պետական մարմինների կողմից խախտումը տեղի է ունենում մինչև հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի նկատմամբ դատավարություն իրականացնելը, ապա հնարավոր չէ ապահովել գործնական և իրական իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե այդ միջոցը պետք է ապահովվի խախտումը կատարվելուց անմիջապես հետո:... Սա գործնական ու իրական իրավական արդյունավետ պաշտպանության միջոց չէ ...»:

## ՄԱՍ II – ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Անմեղության կանխավարկածը

Անմեղության կանխավարկածը արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից մեկն է. ավելի լավ է 5, 10, 20 կամ 100 մեղավոր մարդ ազատ

արծակվի, քան թե մեկ անմեղ մարդ ազատագրկման դատապարտվի<sup>1</sup> : Այս սկզբունքը մշակվել է Անգլիայի, հին Հունաստանի և հին Հռոմի ժամանակներից ի վեր և համարվում է անմեղության կանխավարկածի անբաժանելի մասը: Բլաքսթունի<sup>2</sup> կանոնի համաձայն «ավելի լավ է տաս մեղավոր մարդ ազատ արծակվի, քան թե մեկ անմեղ մարդ տուժի»:

Անմեղության կանխավարկածը կարևորագույն իրավունք է, որից մեղադրյալն օգտվում է քրեական դատավարության ընթացքում այն բոլոր երկրներում, որտեղ հարգվում են մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Այս հիմնարար սկզբունքը երաշխավորված է միջազգային և եվրոպական մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներով, ինչպես նաև մի շարք երկրների սահմանադրություններով և օրենսդրությամբ<sup>3</sup> : *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի*<sup>4</sup> 11-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է.

Քրեական հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ ըստ օրենքի, հրապարակային դատաքննությամբ, որի ժամանակ նա ունեցել է իր պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր երաշխիքները:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի<sup>5</sup> 14-րդ հոդվածը սահմանում է.

... 2. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:  
3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա. (...)

b) բավարար ժամանակ և հնարավորություն ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու և ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար, (...)

1 Տե՛ս «Անմեղության կանխավարկածի վերաբերյալ իրավական վերլուծություն. Մեղավոր անձիք», Ալեքսանդր Վոլոխ, Պենսիլվանիայի համալսարանի իրավական վերլուծություն թիվ 146, 173 (1997), volokh@fas.harvard.edu.

2 Անգլիացի իրավաբան Ուլիամ Բլաքսթուն:

3 «Անմեղության կանխավարկածի» սկզբունքը սահմանված է Ֆրանսիայի իրավական ակտերում. «Յուրաքանչյուր մարդ համարվում է անմեղ, քանի դեռ չի ճանաչվել մեղավոր»: Այս սկզբունքը սահմանված է Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրով և կրկին հիշատակվում է Քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածում, որը Ֆրանսիայի օրենսդրության կարևորագույն նորմերից մեկն է:

4 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (այսուհետ՝ «ՄԻՀՀ»), ընդունվել է հրապարակվել է 1948 թվականի դեկտեմբերի 10-ին Գլխավոր Ասամբլեայի 217 A (III) բանաձևով:

5 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունված և բացված ստորագրումների, վավերացումների և միանալու համար Միավորված Ազգերի կազմակերպության 1966թ. դեկտեմբերի 16-ի 2200A (XXI) բանաձևով: Ուժի մեջ է մտել 1976թ. մարտի 23-ին՝ 49-րդ հոդվածի համաձայն:

d) դատվել իր ներկայությամբ, և իրեն պաշտպանել անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով. պաշտպան չունենալու դեպքում, ելնելով արդարադատության շահերից, ունենալ իր համար նշանակված պաշտպան՝ նրա համար անվճար բոլոր այն դեպքերում, եթե նա բավարար միջոցներ չունի դրա դիմաց վճարելու (...):<sup>6</sup>

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է.

Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան<sup>7</sup>.

Անմեղության կանխավարկածի սկզբունքի համաձայն ոչ մի մեղք չի կարող հաստատված համարվել, քանի դեռ մեղադրանքը ողջամտության սահմաններում չի ապացուցվել: Այդ իսկ պատճառով բոլոր պետական մարմինները պարտավոր են ձեռնպահ մնալ կանխորոշելու դատաքննության արդյունքը<sup>8</sup>: Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի բացառում այնպիսի նորմերի կիրառումը, որոնց համաձայն անմեղության ապացուցման ծանրությունը փոխանցվում է մեղադրյալին<sup>9</sup>: Անմեղության կանխավարկածի իրավունքից օգտվում են նրանք, ովքեր կասկածվում են կամ մեղադրվում են քրեական հանցագործություն կատարելու մեջ, սակայն Եվրոպական դատարանի վճիռների համաձայն «անմեղության կանխավարկածի» սկզբունքը նաև տարածվում է որոշ տիպի քաղաքացիական, ինչպես օրինակ, կարգապահական վարույթի հետ կապված գործերի վրա<sup>10</sup>: Ալբերտ և Կոմտն ընդդեմ Բելգիայի (Albert and Le Compte v. Belgium) գործով վճռում Եվրոպական դատարանը սահմանեց.

... Դատարանի կարծիքով 6-րդ հոդվածի 2-րդ կետի սկզբունքները և Դոկտոր Ալբերտի կողմից հիշատակված 6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դրույթները (այսինքն միայն 6-րդ հոդվածի a), b) և d) ենթակետեր), կիրառելի են, mutatis mutandis, 6-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորման առարկա հանդիսացող կարգապահական վարույթների նկատմամբ, այնպես ինչպես հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի դեպքում<sup>11</sup>:

Անմեղության կանխավարկածն ունի ընթացակարգային դրսևորումներ, ինչպես նաև ընդգրկում է մի շարք հատուկ իրավունքներ ու հարցեր, որոնք ի թիվս այլ հարցերի ներառում են՝ մինչդատական վարույթի հրապարակայնությունը<sup>12</sup>,

6 ԶԲԻՄԴ-ի 14 –րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր:

7 ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մաս:

8 ԶԲԻՄԴ-ի 13-րդ պաշտոնական մեկնաբանություն (1984 թ. քաանմեկերրորդ նստաշրջան), հոդված 14. «Դատարանների առջև հավասարությունը և օրենքով սահմանված կարգով ստեղծված անկախ դատարանի կողմից արդար և հրապարակային դատաքննության իրավունքը», A/39/40 (1984) 143, մաս 7:

9 Տե՛ս օրինակ Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (Lingens v. Austria) գործով Եվրոպական Հանձնաժողովի կարծիքը, 1981 թ.:

10 Տե՛ս Ալբերտը և Լե Կոմտն ընդդեմ Բելգիայի գործով (Albert and Le Compte v. Belgium) Եվրոպական դատարանի 1983 թ. փետրվարի 10-ի վճիռը:

11 Տե՛ս նույն տեղում. մաս 39:

12 Տե՛ս օրինակ Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի գործով (Minelli v. Switzerland) Եվրոպական դատարանի 1983թ.վճիռը :

ապացուցման պարտականությունը<sup>13</sup>, ապացուցման չափանիշները<sup>14</sup>, լռելու իրավունքը<sup>15</sup>, քրեական գործերով ծախսերն ու ծախքերը<sup>16</sup>:

Եվրոպական դատարանի վճիռների համաձայն անմեղության կանխավարկածը կարող է խախտվել հետևյալ դեպքերում.

- Դատական իշխանությունների (դատավորի կամ դատարանի) կողմից<sup>17</sup>,
- Ջանգվածային լրատվության միջոցների կողմից. Եվրոպայի խորհուրդը մշակել և ընդունել է փաստաթղթեր, որոնք ընդգծում են անմեղության կանխավարկածի կարևորությունը և զանգվածային լրատվության միջոցների դերը քրեական վարույթների վերաբերյալ հասարակությանը տեղեկացնելու և քրեական արդարադատության համակարգի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովման գործում: Եվրոպայի խորհուրդը մշակել է քրեական վարույթների հետ կապված տեղեկատվությունը զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանելու վերաբերյալ Սկզբունքներ, որոնք սահմանված են Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2003)13 Հանձնարարականում<sup>18</sup>: Վերջին զարգացումները ցույց են տալիս, որ միջազգային ու տարածաշրջանային իշխանություններն ու կազմակերպությունները պարբերաբար հիշատակում են արտահայտվելու և տեղեկատվության ազատության սկզբունքների կարևորությունը, որպես ժողովրդավարական ու բազմակարծիք հասարակության հիմնական տարրերի և մարդկության առաջընթացի ու հասարակության զարգացման նախապայմանի, միաժամանակ խորհուրդ տալով պետություններին զանգվածային լրատվության միջոցներին տրամադրել տեղեկատվություն՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի պատշաճ պահպանմամբ: Նախարարների կոմիտեի «Ահաբեկչության դեմ պայքարի լուսի ներքո զանգվածային լրատվության միջոցներում արտահայտվելու և տեղեկատվության ազատության վերաբերյալ Հռչակագիրը» ուղղակիորեն կոչ է անում անդամ-պետությունների հանրային իշխանություններին.

«... զանգվածային լրատվության միջոցներին տեղեկատվություն տրամադրել՝ պատշաճ հարգանք ցուցաբերելով անմեղության կանխավարկածի սկզբունքի և

13 Տե՛ս նախորդ մասը:

14 Եվրոպական դատարանի վճիռների համաձայն Կոնվենցիայով պահանջվող ապացուցման ստանդարտը «ողջամտության սահմաններում ապացուցումն»-ն է: Տես օրինակ Անգելովան ընդդեմ Բուլղարիայի (Angelova v. Bulgaria) գործով Եվրոպական դատարանի 2002 թ. հունիսի 13-ի վճիռը, մաս 167:

15 Տե՛ս օրինակ Հեանին և Մըք Գուինեսն ընդդեմ Իռլանդիայի (Heaney and McGuinness v. Ireland) գործով Եվրոպական դատարանի 2000 թ. դեկտեմբերի 21-ի վճիռը:

16 Տե՛ս օրինակ Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի գործով (Minelli v. Switzerland) Եվրոպական դատարանի 1983թ. վճիռը:

17 Տե՛ս նույն տեղում:

18 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված «Քրեական վարույթների հետ կապված տեղեկատվությունը զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանելու վերաբերյալ Rec(2003)13 հանձնարարական», (ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից 2003թ. հուլիսի 10-ին, Նախարարների ներկայացուցիչների 848-րդ հանդիպման ժամանակ):

անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ ...»: Հռչակագիրը նաև կոչ է անում զանգվածային լրատվության միջոցներին և լրագրողներին... հարգել այն անձանց անմեղության կանխավարկածի իրավունքը, որոնց նկատմամբ ահաբեկչության դեմ պայքարի կոնտեքստում քրեական վարույթ է իրականացվում»<sup>19</sup>:

Ներկայումս ֆրանսիական օրենսդրությունը սահմանում է երաշխիքներ այն անձանց համար, ում «անմեղության կանխավարկածը» խախտվել է զանգվածային լրատվության միջոցների կողմից<sup>20</sup>:

- Պետական իշխանությունների (պաշտոնատար անձանց) կողմից. Ալլենե դե Ռիբենոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով իր վճռում Եվրոպական դատարանն առաջին անգամ սահմանեց, որ «անմեղության կանխավարկածի» սկզբունքը պարտադիր է ոչ միայն դատարանների, այլ նաև պետական իշխանությունների համար: Այդ գործով Դատարանը նշեց, որ դիմումատուի անմեղության կանխավարկածի իրավունքը խախտվել է սպանության հետաքննության ընթացքում Կառավարության անդամի և ոստիկանության բարձրաստիճան ծառայողների կողմից տրված մամուլի ասուլիսի ժամանակ Դիմումատուի վերաբերյալ արված հայտարարությունների, և հետագայում դիմումատուի հեղինակությանը պատճառված ենթադրյալ վնասի հատուցում ստանալու համար Դիմումատուի հարուցած վարույթի երկարատևության արդյունքում: Դիմումատուի կալանքն ու ձերբակալումը Փարիզի քննության իրականացնող դատավորի կողմից մի քանի օր առաջ սկսված դատական քննության մի մասն էին կազմում, և նրան դարձնում էին «հանցավոր արարք կատարելու մեջ մեղադրվող» անձ: Ոստիկանության ծառայողները վարում էին գործի քննությունը:

Վճռի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը որոշում կայացնելիս գլխավոր շեշտը դրել է անմեղության կանխավարկածի հիմնական նպատակի վրա, այն է՝ պաշտպանել մեղադրյալին, մեղավորությունը գնահատող դատարանի որոշումներից կամ պաշտոնատար անձի կողմից արված այլ հայտարարություններից, որոնք արվել են նախքան նրա մեղավորությունը օրենքով սահմանված կարգով ապացուցված լինելը: Այս դրույթը հետագայում

19 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտե, «Ահաբեկչության դեմ պայքարի լուսի ներքո զանգվածային լրատվության միջոցներում արտահայտվելու և տեղեկատվության ազատության վերաբերյալ Հռչակագիր» (Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2005թ. մարտի 2-ին, Նախարարների ներկայացուցիչների 917-րդ հանդիպման ժամանակ):

20 Այն թերթը, որն անպատշաճ կերպով ինչ որ մի անձի ներկայացրել է որպես մեղավոր, կարող է դատարանի կողմից պարտադրվել հրապարակելու հերքող հոդված՝ պաշտպանյալի անմեղության կանխավարկածը վերահաստատող և օրենքի խախտման փաստը հաստատող հայտարարությամբ: Հետաքննող մագիստրի կամ դատարանների կողմից գործի քննությունը կարճելու, կամ արդարացման դատավճիռ կայացնելու դեպքերում, անձը, ում անմեղությունն անհիմն կերպով կասկածի տակ էր դրվել, այժմ օժտված է Քրեական դատավարության օրենսգրքով (նոր հոդվածներ՝ 177-1 և 212-1) և Մամուլի մասին 1881 թվականի ակտով ((փոփոխված հոդվածներ՝ 13 և 65, նոր հոդվածներ՝ 65-1 և 65-2) սահմանված պաշտպանության նոր եղանակներով: 1993 թվականի հունվարի 4-ի ակտը երկարաժգում կամ վերականգնում է «Քրեական վարույթների ժամանակ հիշատակված կամ նշված... անձանց» համար 1881 թվականի հուլիսի 29-ի ակտով սահմանված ժամկետային սահմանփակումները՝ հերքման իրավունքը իրականացնելու, և գործի քննությունը կարճելու կամ արդարացման դատավճռի կայացման դեպքերում զրպարտության կապակցությամբ վարույթ հարուցելու համար:

վերահաստատվեց Դատարանի այլ վճիռներում<sup>21</sup>: Մյուս կողմից Դատարանը Ռիբեմոնի գործում ընդգծեց նաև 10-րդ հոդվածի և ընթացքի մեջ գտնվող քրեական վարույթների վերաբերյալ տեղեկացված լինելու հասարակության իրավունքի կարևորությունը և սահմանեց, որ.

Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատությունը ներառում է տեղեկություն ստանալու և տարածելու ազատությունը: Ուստի 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող խոչընդոտել իշխանություններին հասարակությանը տեղեկացնելու ընթացող քրեական գործի վարույթի վերաբերյալ, բայց պահանջում է դա անել բավարար զուսպ և շրջահայացորեն, հարգելով անմեղության կանխավարկածի սկզբունքը<sup>22</sup>:

Ինչպես դատավոր Բոննիչին է նշել իր մասնակի տարբերվող կարծիքում, Ալլենե դե Ռիբեմոնի գործով Դատարանն առաջին անգամ հաստատեց, որ «անմեղության կանխավարկածի» իրավունքը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի այլ նաև հանրային իշխանությունների կողմից:

Դատարանն անմեղության կանխավարկածի իրավունքի ենթադրյալ խախտումները քննելիս իր վճռում կիրառեց հետևյալ թեստը.

ա) պարոն Ռիբեմոնի մեղավորությանն առջնվող ֆրանսիական ոստիկանության մի շարք բարձրաստիճան ծառայողների կողմից արված հայտարարությունների ազդեցության աստիճանի քննությունը, և

բ) իրավասու դատական իշխանությունների կողմից փաստերի կանխակալ գնահատման առկայությունը: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը կարող է պետություններից պահանջել միջամտել արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը, եթե մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքը կարող է խախտվել: Նշված թեստը կիրառելու միջոցով Եվրոպական դատարանը գտավ, որ այդ գործի փաստերի լույսի ներքո առկա է 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված Դիմումատուի «անմեղության կանխավարկածի» իրավունքի խախտում: Դատարանը նշեց, որ Դիմումատուի կալանքն ու ձերբակալումը մի քանի օր առաջ Փարիզի քննության իրականացնող դատավորի կողմից սկսված դատական քննության մի մասն էին կազմում, և նրան 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով դարձնում էին «հանցավոր արարք կատարելու մեջ մեղադրվող» անձ: Մամուլի ասուլիսին մասնակցած երկու բարձրաստիճան ոստիկանության ծառայողներն էլ վարում էին գործի քննությունը: Դատական քննությանը զուգահեռ կատարված և Ներքին գործերի նախարարի կողմից հավանության արժանացած նրանց հայտարարությունները բացատրվում էին այդ հետաքննության առկայությամբ և ուղղակիորեն կապված էին դրա հետ:

Դատավոր Բոննիչիի մասնակի տարբերվող կարծիքում արտահայտված անհամաձայնությունը հիմնականում վերաբերվում էր այն հարցին, որ չնայած

21 Տե՛ս օրինակ Ռուշիտի ընդդեմ Ավստրիայի (Rushiti v. Austria) գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի մարտի 21-ի վճիռը, մաս 31: Տե՛ս նաև Վեյքսելբրաուն ընդդեմ Ավստրիայի (Weixelbraun v. Austria) գործով Եվրոպական դատարանի 2002 թվականի մարտի 20-ի վճիռը, մաս 25:

22 Տե՛ս Ալլենե դե Ռիբեմոն ընդդեմ Ֆրանսիայի (Allenet De Ribemont v. France) գործով Եվրոպական դատարանի 1995 թվականի փետրվարի 10-ի վճիռը, մաս 38:

Դատարանն իր վճռի 35-րդ մասում նշում է, որ. «...Կոնվենցիան պետք է մեկնաբանվի այնպես, որպեսզի երաշխավորի իրավունքներ, որոնք իրական և գործող են ի տարբերություն տեսական և վերացական իրավունքների»<sup>23</sup>, նրա կողմից արված մեկնաբանությունը չի կարող երաշխավորվել գործնականում և լինել արդյունավետ, հիմք ընդունելով այն փաստը, որ եթե պետական մարմինների կողմից խախտումը տեղի է ունենում մինչև հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի նկատմամբ դատավարություն իրականացնելը, ապա հնարավոր չէ ապահովել գործնական և իրական իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե այդ միջոցը պետք է ապահովվի խախտումը կատարվելուց անմիջապես հետո:<sup>24</sup>

ՄԻԵԿ-ի 1-ին և 13-րդ հոդվածների համաձայն պետությունները պարտավոր են Կոնվենցիայով սահմանված իրավունքները և ազատությունները ապահովել իրենց իրավագրության տակ գտնվող յուրաքանչյուր մարդու համար: Սրանից կարելի է եզրակացնել, որ անդամ-պետությունները պարտավորված են ներպետական մակարդակում ապահովել Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների իրականացման գործնական ու արդյունավետ միջոցներ: Անդամ-պետությունները ձեռք են առնում տարբեր միջոցներ իրենց երկրներում ՄԻԵԿ-ով սահմանված իրավունքների ու ազատությունների և Եվրոպական դատարանի վճիռների անմիջական կիրառումն ապահովելու համար: Այդ միջոցառումները ներառում են օրենսդրության, դատական և այլ համապատասխան ոլորտների բարեփոխումները և այլ անհրաժեշտ միջոցառումներ: Որոշ պետություններ, ինչպես օրինակ Միացյալ Թագավորությունը, ընդունել են իրավական ակտեր, որոնք պահանջում են դատարաններից և տրիբունալներից Կոնվենցիայով սահմանված իրավունքների ու ազատությունների հետ կապված հարցերի կապակցությամբ որոշումներ կայացնելիս առաջնորդվել Եվրոպական դատարանի վճիռներով ու Հանձնաժողովի որոշումներով<sup>25</sup>: Եվրոպական կոնվենցիայի պահանջները և Ալենե Դե Ռիբենոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը պետությունների վրա պարտավորություն են դնում ապահովել արդյունավետ և գործնականում կիրառելի իրավական պաշտպանության միջոցներ իրենց իրավագրության տակ գտնվող մարդկանց համար այն բոլոր դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում վիճարկել «անմեղության կանխավարկածի» իրավունքը:

Ի լրացումն ՄԻԵԿ-ի համապատասխան դրույթների և Եվրոպական դատարանի վճիռների, Ստրասբուրգի մարմինները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային այլ կառույցներ, մեծ կարևորություն են տալիս արդար դատաքննությանը, ներառյալ «անմեղության կանխավարկածի» սկզբունքին: Այդ առումով ընդունվել են մի շարք փաստաթղթեր, որոնք սահմանում են համապատասխան պահանջներ, որոնց պետությունները պետք է հետևեն արդարադատության պատշաճ իրականացում ապահովելու համար: Եվրոպայի խորհուրդը անմեղության կանխավարկածի

23 Տե՛ս նույն տեղում՝ մաս 35:

24 Տե՛ս նույն տեղում՝ դատավոր Միֆսոտ Բոննիչի մասնակի տաբերվող կարծիքը, 3-րդ և 4-րդ մասեր:

25 Մարդու իրավունքների 1998 ակտ (Human Rights Act 1998), բաժին 21:

սկզբունքը վերահաստատել է մի շարք այլ փաստաթղթերում, մասնավորապես Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Քրեական գործերով միջամտության<sup>26</sup> և Վկաներին ահաբեկելու և պաշտպանության իրավունքի վերաբերյալ հանձնարարականներում<sup>27</sup>:

Դատական համակարգի, մինչ դատական քննության և կայացվելիք վճիռների վերաբերյալ լրագրողների, ինչպես նաև Պետական պաշտոնյաների հրապարակումներին (հեռուստատեսությամբ, ռադիոյով և թերթերով) առնչվող Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դատարանը կիրառում է ընթացող քրեական հետաքննության, ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի մասին տեղեկացված լինելու հասարակության իրավունքի և արդարադատության իրականացման շահի, մեղադրյալի, դատավորի և դատավարության այլ մասնակիցների իրավունքների հավասարակշռման ապահովման թեստը<sup>28</sup>: Այս գործով ևս, Եվրոպական դատարանը ընդգծեց 10-րդ հոդվածի և քրեական հետաքննությունների վերաբերյալ տեղեկացված լինելու հասարակության իրավունքի կարևորությունը: Միննույն ժամանակ, Եվրոպական դատարանը մատնանշեց մի շատ կարևոր սկզբունք, որը ներպետական իշխանություններին խորհուրդ էր տալիս, հասարակությանը ընթացող քրեական հետաքննության մասին տեղեկացնելիս «գործել բավարար զուսպ և շրջահայացորեն», հարգելով անմեղության կանխավարկածի սկզբունքը: Չնայած նրան, որ Եվրոպական դատարանը չմեկնաբանեց «գործել բավարար զուսպ և շրջահայացորեն» հասկացության իմաստը, սակայն հաշվի առնելով «անմեղության կանխավարկածի» բնույթն ու դրա խախտման հնարավոր մակարդակները պարզ է դառնում, որ Դատարանն այս թեստը կկիրառի կոնկրետ գործի լույսի ներքո՝ հաշվի առնելով գործի փաստերն ու հանգամանքները:

Հարկ է նշել, որ որոշ երկրներ ընդունել են վարույթների լուսաբանումը և հրապարակայնացումը կարգավորող օրենսդրական ակտեր և պարտադիր ուղեցույցեր: Օրինակ՝ Անգլիայի և Ուելսի «Դատարանի գործունեության լուսաբանում և վարույթների հրապարակայնություն՝ ՄԻԵԿ-ի լույսի ներքո» Պարտադիր ուղեցույցը<sup>29</sup> սահմանում է.

1. Մինչդատական հրապարակայնությունը կարող է ՄԻԵԿ-ի՝ մասնավորապես 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի, խախտում առաջացնել:

---

26 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի Քրեական գործերով միջամտության վերաբերյալ թիվ R(99)19 Հանձնարարական ուղղված անդամ պետություններին (այսուհետ՝ «Հանձնարարական R (99) 19») (Ընդունված է Նախարարների խորհրդի կողմից 1999թ. սեպտեմբերի 15-ին նախարարների ներկայացուցիչների 679-րդ հանդիպման ժամանակ):

27 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի Վկաներին ահաբեկելու և պաշտպանության իրավունքի վերաբերյալ թիվ R(97) 13 Հանձնարարական ուղղված անդամ պետություններին (այսուհետ՝ «Հանձնարարական R(97) 13») (Ընդունված է Նախարարների խորհրդի կողմից 1997թ. սեպտեմբերի 10-ին, նախարարների ներկայացուցիչների 600-րդ հանդիպման ժամանակ):

28 Տե՛ս օրինակ Ուորմն ընդդեմ Ավստրիայի (Worm v. Austria) գործով Եվրոպական դատարանի վճիռը:

29 Տե՛ս Անգլիայի և Ուելսի «Դատարանի գործունեության լուսաբանում և վարույթների հրապարակայնություն՝ ՄԻԵԿ-ի լույսի ներքո» Պարտադիր ուղեցույցը: Կայք. <http://www.hse.gov.uk/enforce/enforcementguide/court/reporting/echr.htm>

2. Պետական իշխանությունների համար իրավաչափ չէ...գործել «Կոնվենցիայով նախատեսված իրավունքների» հետ անհամատեղելի եղանակով: Անձը, ով այնդուրեք է, որ հանրային իշխանությունները Մարդու իրավունքների 1998 թվականի ակտի («ՄԻՓ 1998») իմաստով գործել են ոչ իրավաչափ, կարող է դառնալ (կամ դարձել է) անօրինական ակտի տուժող<sup>30</sup>:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի 1931 թվականի հուլիսի 2-ի Ակտին (բաժին 2), որը արգելում էր ցանկացած տեղեկատվության տարածում ընթացիկ քրեական գործերի վերաբերյալ, որտեղ առկա էր քաղաքացիական հայց, ապա Ղատարանը գտավ որ այն համատեղելի չէ Եվրոպական կոնվենցիայի հետ: Ղու Ռոյը և Մալաուրին ընդդեմ Ֆրանսիայի (Du Roy and Malaurie v. France) գործով Եվրոպական դատարանը գտավ, որ.

...Չնայած նրան, որ ներպետական դատարանները ինչպես և սույն գործում գտան, որ սահմանափակումը արդարացված էր, քանի որ պաշտպանում էր այլ անձանց հեղինակությունը և պահպանում էր արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը, այնուամենայնիվ այդ հիմնավորումը բավարար չէ, քանի որ սահմանափակումը կիրառելի է բացառապես այն քրեական վարույթի նկատմամբ որտեղ առկա է քաղաքացիական հայցվոր:...

... Նման տարբերությունը հիմնված չէ որևէ օբյեկտիվ հիմքի վրա և ամբողջությամբ խախտում է հասարակությանը իրադարձությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու մասնուլի իրավունքը...<sup>31</sup>:

Հատկանշական է, որ անդամ պետությունները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային մարմինները մեծ կարևորություն են տալիս «անմեղության կանխավարկածի» սկզբունքի պաշտպանության համար համապատասխան մեխանիզմների առկայության ապահովմանը, որը հավանական է, որ կխախտվի ոչ միայն դատավորների այլ նաև այլ մարմինների կողմից:

## **Բ. Վարույթների տևողությունը**

Անկախ և անաչառ արդարադատության իրականացման ապահովումը ժողովրդավարական և իրավական պետությունների նպատակն է<sup>32</sup>: Եվրոպական դատարանը կարևոր նշանակություն է տալիս ժողովրդավարական հասարակությունում արդար դատաքննությանը և նշում է.

...արդարադատության իրականացման թափանցիկության և իրապարակայնության ապահովումը նպաստում է 6-րդ (6-րդ հոդվածի 1-ին կետ)

30 Տե՛ս 1998թ. Մարդու իրավունքների ակտի (Human Rights Act 1998) 7-րդ բաժնի (1)-ին մասի (c) և (b) ենթակետերը:

31 Տե՛ս Ղու Ռոյը և Մալաուրին ընդդեմ Ֆրանսիայի (Du Roy and Malaurie v. France) գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, մաս 35:

32 Մոնրո Պրայս և Պիտեր Կրուզ «Բարենպաստ միջավայր ազատ և անկախ զանգվածային լրատվության միջոցների համար» (մաս 4.3.3.5. դատական իշխանության պաշտպանությունը, էջ 36); Վուլֆսոնի քոլեջ. OXFORD OX2 6UD, 2000 թ. դեկտեմբերի 1 :

հողվածի նպատակին հասնելուն, այն է՝ արդար դատաքննությունը, որի երաշխավորումը Եվրոպական կոնվենցիայի իմաստով ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է (տես 1975 թվականի փետրվարի 21-ի Գոլդերի գործով վճիռը (Golder judgment) Շարք A թիվ 18, կետ 18, և նաև 1960 թվականի նոյեմբերի 14-ի Լուլեսսի գործով վճիռը (Lawless judgment) Շարք Ա թիվ 1, կետ 13)...<sup>33</sup>.

Քրեական և քաղաքացիական դատավարություններում արդար դատաքննության իրավունքը երաշխավորված է մարդու իրավունքների պաշտպանության Միջազգային և Եվրոպական կառույցների կողմից: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը, որը ներառում է մի շարք իրավունքներ և սկզբունքներ, ինչպիսիք են.

- անմեղության կանխավարկածի սկզբունքը (մինչև օրենքով սահմանված կարգով մեղավորությունը ապացուցված լինելը),
- մեղադրյալի իրավունքը ունենալ բավարար ժամանակ ու հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,
- իրեն անձամբ կամ իր ընտրած պաշտպանների միջոցով պաշտպանելու իրավունք,
- վկա կանչելու և հարցաքննելու իրավունք,
- անհրաժեշտության դեպքում թարգմանչի անվճար օգնությունից օգտվելու իրավունք<sup>34</sup>:

ՄԻԵԿ-ն և դրա Արձանագրությունները սահմանում են նաև այլ իրավունքներ և ազատություններ, որոնք երաշխավորում են արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովումը: Այդպիսի իրավունքները ներառում են՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը<sup>35</sup>, բացառապես օրենքի հիման վրա պատժվելու իրավունքը<sup>36</sup>, քրեական գործերով բողոքարկելու իրավունքը<sup>37</sup>, սխալ դատապարտման դեպքում հատուցում ստանալու իրավունքը<sup>38</sup> կրկին չդատվելու և չպատժվելու իրավունքը<sup>39</sup>:

*Ողջամիտ ժամկետներում* դատաքննության իրավունքը հանդիսանում է արդար դատաքննության արդյունավետ իրականացումն ապահովող կարևորագույն իրավունքներից մեկը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Ղաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի c) ենթակետը սահմանում է, որ մեղադրյալի նկատմամբ դատաքննությունը պետք է իրականացվի առանց չարդարացված հապաղման: Այս երաշխիքը վերաբերում է ոչ միայն այն ժամանակին, երբ դատաքննությունը պետք է սկսվի, այլ նաև դատաքննության ավարտին և վճռի կայացմանը. վարույթի բոլոր փուլերը պետք է տեղի ունենան «առանց

33 Տե՛ս Աքսենն ընդդեմ Գերմանիայի գործով (Axen v. Germany) Եվրոպական դատարանի 1986 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը մաս 25:

34 Տե՛ս ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը:

35 Տե՛ս ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածը:

36 Տե՛ս ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածը:

37 Տե՛ս ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը:

38 Տե՛ս ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 3-րդ հոդված:

39 Տե՛ս ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը:

չարդարացված հապաղման»։ Այս իրավունքը արդյունավետ դարձնելու համար, անհրաժեշտ են այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն դատաքննության՝ «առանց չարդարացված հապաղման» իրականացումը ինչպես առաջին աստիճանում, այնպես էլ բողոքարկման դեպքերում<sup>40</sup>։

ՄԻԵԿ-ն սահմանում է նաև ողջամիտ ժամկետում դատաքննության անցկացման երաշխիքներ։ ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ կետը նման երաշխիքներ է սահմանում այն անձանց համար, ովքեր նախնական կալանքի տակ են գտնվում, մինչդեռ 6-րդ հոդվածի 1-ին կետը ցանկացած քրեական մեղադրանք առաջադրելիս ապահովում է ողջամիտ ժամկետում իրականացվող արդարացի դատաքննությունը։ Եվրոպական դատարանի վճիռների համաձայն ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ողջամիտ ժամկետը սկսում է այն պահից, երբ անձին ՄԻԵԿ-ի իմաստով<sup>41</sup> քրեական գործով մեղադրանք է առաջադրվում<sup>42</sup> և երբ քաղաքացիական գործով վարույթ է հարուցվում, և այդ ժամկետը ներառում է գործով բոլոր վարույթները, ներառյալ բողոքարկումն ու վճիռի կատարումը<sup>43</sup>։

Դատական վարույթների (քրեական և քաղաքացիական) տևողությունը դիտարկվել և ուսումնասիրվել է Հանձնաժողովի և Եվրոպական դատարանի բազմաթիվ որոշումներում և վճիռներում։ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս որ շատ երկրներ, ինչպես օրինակ Իտալիան, փոփոխություններ են կատարել դատական վարույթների տևողությանը վերաբերող իրենց օրենսդրություններում։

Վարույթի տևողության հարցը քննելիս, Եվրոպական դատարանը յուրաքանչյուր գործի նկատմամբ անհատական մոտեցում է ցուցաբերում և կիրառում է իր վճիռներում մշակված ներքոնշյալ չափանիշները<sup>44</sup>։

- գործի բարդությունը<sup>45</sup>,
- դիմումատուի վարքագիծը<sup>46</sup>,

40 ՔՔԽՄԴ-ի 13-րդ պաշտոնական մեկնաբանություն (1984թ. քանանեկերրորդ նստաշրջան), հոդված 14. «Դատարանների առջև հավասարությունը և օրենքով սահմանված կարգով ստեղծված անկախ դատարանի կողմից արդար և հրապարակային դատաքննության իրավունքը» A/39/40 (1984) 143, մաս 10։

41 Կոնվենցիայի իմաստով «մեղադրանքը» ինքնուրույն կոնցեպցիա է, որը կիրառելի է անկախ ներպետական օրենսդրությամբ սահմանված «մեղադրանքի» իմաստից։ Նաուլա Մոլ և Կատարինա Հարբի, «Արդար դատաքննության իրավունք» Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2001թ. հոկտեմբեր։ Տպագրված է Պերմանիայում։ Տե՛ս նաև Կորիգլիանոն ընդդեմ Իտալիայի (Corigliano v. Italy) գործով Եվրոպական դատարանի 1982թ. դեկտեմբերի 1-ի վճիռը, և Իմբրիոսկան ընդդեմ Շվեյցարիայի (Imbriosca v. Switzerland) գործով Եվրոպական դատարանի 1993թ. նոյեմբերի 24-ի վճիռը։

42 Տե՛ս օրինակ Էկլին ընդդեմ Պերմանիայի գործով (Ekl v. Germany) Եվրոպական դատարանի 1983 թվականի, Հոկանենն ընդդեմ Ֆինլանդիայի (Hokkanen v. Finland) գործով 1994 թվականի սեպտեմբերի 23-ի և Կատտե Կլիշե դե լա Գրանժե ընդդեմ Իտալիայի (Katte Klishe de la Grange v. Italy) գործով 1994 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռները։

43 Եվրոպական դատարանի վճիռների համաձայն 6-րդ հոդվածի իմաստով ցանկացած դատարանի կողմից կայացրած վճիռների կատարումը պետք է հանդիսանա «դատաքննության» անբաժանելի մաս։ Տե՛ս օրինակ Հոնսբին ընդդեմ Հունաստանի գործով (Hornsby v. Greece) Եվրոպական դատարանի 1997թ. մարտի 19-ի վճիռը։ Տե՛ս նաև Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի (Burdov v. Russia) գործով Եվրոպական դատարանի 2002թ. սեպտեմբերի 4-ի վճիռը։

44 Տե՛ս օրինակ Բուչհոլցն ընդդեմ Պերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության գործով (Buchholz v. Federative Republic of Germany) Եվրոպական դատարանի 1981 թ. մայիսի 6-ի վճիռը, մաս 49։

45 Եվրոպական դատարանի վճիռների համաձայն գործի բարդությունը կարող է ներառել գործի փաստերի, իրավական կարգավորման ենթակա խնդիրների, ինչպես նաև մեղադրյալների ու վկաների քանակին, գործի փաստերի բնույթին վերաբերող հարցեր, ինչպես նաև այլ հարցեր, որոնց անդրադառնում է Եվրոպական դատարանը վարույթների տևողության ողջամտությունը գնահատելիս։

46 Այս չափանիշի հիման վրա Եվրոպական դատարանը ուսումնասիրում է այն հարցին, թե արդյոք Դիմումատուն իր գործողություններով կամ անգործությամբ առաջացրել է գործի որևէ ձգձգում։

- համապատասխան ազգային իշխանությունների (ներառյալ հետաքննություն իրականացնող մարմինները, դատարանները, ինչպես նաև դատավարության մեջ ընդգրկված այլ համապատասխան ազգային իշխանությունները, ինչպես օրինակ վարչական մարմինները և այլն) վարքագիծը<sup>47</sup>,
- դիմումատուի ռիսկերը (դատաքննության երկարաձգման ազդեցությունը Դիմումատուի վրա)<sup>48</sup>:

Եվրոպական դատարանն Ալլենե դե Ռիբեմոնի գործը քննեց վերը թվարկված չափանիշների հիման վրա և գործի փաստերից և հանգամանքներից ելնելով նշեց, որ վարույթի ամբողջ տևողությունը, այն է՝ մոտավորապես տասնմեկ տարի և ութ ամիս, չի կարող 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ողջամիտ համարվել: Վերը բերված Ադյուսակ 3-ը ներկայացնում է վարույթների ժամանակագրությունը, Դիմումատուի բողոքները, Ֆրանսիայի կառավարության առարկությունները, ինչպես նաև վարույթի տևողության ողջամտության առնչության ծագած և Հանձնաժողովի և Եվրոպական դատարանի կողմից քննարկված հարցերը:

Դատարանը համաձայնեց, որ գործը բարդ էր այն առումով, որ դա կապված էր Պետության պատասխանատվության հետ: Համաձայն Կառավարության պնդումների, գործով ծագում էր նաև արված արտահայտությունների անփութությունն ապացուցելու բարդ հարցը և որ այնտեղ կային դատավարական բարդություններ, որոնց նպաստել էր դիմումատուն վարույթները մոտավորապես վեց տարի ձգձգելով: Այնուամենայնիվ, Դատարանը սահմանեց, որ դա չի կարող ամբողջությամբ արդարացնել վիճարկվող վարույթների տևողությունը: Եվ Հանձնաժողովը և Դատարանը գտան, որ պարոն Ալլենե դե Ռիբեմոնի վարքագիծը որոշակի առումով երկարաձգել է վարույթները: Եվրոպական դատարանի վճիռների համաձայն դիմումատուի կողմից վարույթների երկարաձգումը թուլացնում է նրա դիրքերը, այնուամենայնիվ այս գործով Դատարանը գտավ, որ եթե նույնիսկ եթե դիմումատուն կարող է պատասխանատու լինել մոտավորապես երեք տարի և չորս ամիս ուշացման համար, դեռ կմնա մոտավորապես ութ տարի, այսինքն Ֆրանսիայի համապատասխան պետական մարմինները պետք է պատասխանատու լինեն վարույթների մնացած տևողության համար:

Պետական իշխանությունների գործողությունների կապակցությամբ դատարանը հիշատակեց, որ վարույթների ընթացքում առկա էին անգործության մի շարք ժամանակահատվածներ, որոնց համար ազգային իշխանությունները պատասխանատու էին: Ավելին, և վարչական և դատական իշխանությունները անընդհատ խոչընդոտել են տեսաձայնագրությունների ներկայացումը, որոնք կարող

47 ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների և ազատությունների համաձայն, պետությունները պատասխանատու են արդար դատաքննության երաշխիքների ապահովման համար և պետության դատական ու այլ համապատասխան մարմինների (վարչական, կարգապահական) կողմից դատաքննության յուրաքանչյուր ձգձգում պետք է արդարացվի ՄԻԵԿ-ի իմաստով: Այս կարևոր դրույթը, կապված պետությունների պարտականության հետ այն առումով, որ պետությունները պարտավոր են իրենց իրավական համակարգն այնպես կարգավորել, որ դատարանները կարողանան կատարել 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, Եվրոպական դատարանը հստակորեն սահմանել է Չիմմերմանը և Շտեյներն Շվեյցարիայի (Zimmerman and Stejner v. Switzerland) գործով վճռում:

48 Սա դիտարկվում է հիմնականում քրեական գործերում, երբ մեղադրյալը նախնական կալանքի տակ է գտնվում, և նաև այն գործերում, որտեղ դատաքննության արագ ընթացքը էական է, օրինակ առողջությանը հասցված վնասի գործերով, երեխաների հետ կապված գործերով, աշխատանքային վեճերով և այլն:

էին Դիմումատուին հնարավորություն տալ ապացուցել թե ինչ է ասվել մամուլի ասուլիսի ժամանակ: Դատարանը նշեց, որ կասկած չկա, որ սա ներպետական վարույթների դանդաղ ընթացքի հիմնական պատճառն է եղել:

Դատարանը նաև քննության առավել վիճարկվող գործի նկատմամբ Ֆրանսիայի իշխանությունները ցուցաբերած մոտեցումը: *Ադյուսակ 3-ում* մանրամասն նկարագրված են նաև այս հարցի կապակցությամբ Դիմումատուի ներկայացրած բողոքները, Ֆրանսիայի կառավարության առարկությունները և գործի վերաբերյալ Հանձնաժողովի և Եվրոպական դատարանի որոշումները: Դատարանը նշեց, որ ոչ պակաս քան հինգ տարի է պահանջվել վարչական դատարաններից որոշելու համար, որ նրանք ընդդատություն չունեն: Ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանում քննության համար գործը պատրաստելու համար պատասխանատու դատավորը իսկապես ջանքեր է գործադրել վարույթներն արագացնելու համար, սակայն գործի նյութերից չի երևում, որ որևէ այլ դատավոր նույնն է արել ընդհանուր իրավասության դատարաններում: Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում ընդգծել է վարույթներն արագացնելուն ուղղված դատական իշխանությունների գործողությունների կարևորությունը, ինչը կապահովի, որ Դիմումատուն ստանա ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները 49:

Հետևաբար Եվրոպական դատարանը գտավ, որ առկա է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Դատարանը վճռեց, որ Ֆրանսիան երեք ամսվա ընթացքում պետք է Դիմումատուին վճարի 2,000,000 50 (երկու միլիոն) ֆրանսիական ֆրանկ որպես վնասի հատուցում և 100,000 (հարյուր հազար) ֆրանկ ծախսերի և ծախքերի համար, գումարած ավելացված արժեքի հարկը: Դատարանն այս որոշումը կայացրեց հաշվի առնելով մի շարք համապատասխան հանգամանքներ, որոնք արդարացնում են իր գնահատումները, ինչպես և պահանջվում է ՄԻԵԿ-ի 50-րդ հոդվածով:

### ՄԱՍ 3. ԳՈՐԾԻ ԷԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վճռում կան երկու ուշագրավ առանձնահատկություններ, որոնք էական նշանակություն են ունեցել «անմեղության կանխավարկածի» իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ գործերի հետագա մեկնաբանման հարցում և ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված «անմեղության կանխավարկածի» իրավունքի և արդար դատաքննության իրավական կարգավորման հարցում դարձել են իրավական բազա:

1. Դատարանը գտավ, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի, այլ նաև այլ հանրային իշխանությունների կողմից<sup>51</sup>:

49 Տե՛ս օրինակ Վերնիլոն ընդդեմ Ֆրանսիայի գործով (Vernillo v. France) Եվրոպական դատարանի 1991 թվականի փետրվարի 20-ի վճիռը :

50 Պարոն Ալլենե դե Ռիբեմոնն իր կրած վնասները գնահատում է ընդամենը 10,000,000 ֆրանսիական ֆրանկ: Նա նաև պահանջում էր 270,384.28

ֆրանսիական ֆրանկ ծախսերի և վնասների դիմաց: Դատարանը մասնակիորեն բավարարեց նյութական վնասի համար պահանջվող փոխհատուցումը:

51 Տե՛ս Ալլենե դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով (Allenet De Ribemont v. France) Եվրոպական դատարանի 1995 թվականի հունվարի 23-ի վճիռը՝

մաս 36:

Վճռի այս դրույթից ակնհայտ է, որ «անմեղության կանխավարկածի» սկզբունքով պարտավորված են ոչ միայն դատարաններն այլ նաև այլ պետական մարմինները:

2. Ղատարանը նաև ընդգծեց Կոնվենցիայի 10-րդ հոդվածի և քրեական հետաքննությունների վերաբերյալ հասարակության տեղեկացված լինելու անհրաժեշտության կարևորությունը, և նշեց, որ.

Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատությունը ներառում է տեղեկություն ստանալու և տարածելու ազատությունը: Ուստի 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող խոչընդոտել իշխանություններին հասարակությանը տեղեկացնելու ընթացող քրեական գործի վարույթի վերաբերյալ, բայց պահանջում է դա անել *բավարար զուսպ և շրջահայացորեն*, հարգելով անմեղության կանխավարկածի սկզբունքը<sup>52</sup>:

---

52 Տե՛ս նույն տեղում՝ մաս 38: